



**Հանրակրթական «Ես և իմ հայրենիքը» և «Ես, իմ հայրենիքն ու աշխարհը» դասընթացների ուսումնառության հայեցակարգ, առարկայական ծրագրեր**

**Երևան 2020**

**Հանրակրթական «Ես և իմ հայրենիքը» և «Ես, իմ հայրենիքն ու աշխարհը» դասընթացների ուսումնառության հայեցակարգ, առարկայական ծրագրեր**

**(նախագիծ)**

**1. Դասընթացի նպատակը.**

Ձևավորել ազգային ու համամարդկային արժեքներ կրող ազատ, գիտակից ու պատասխանատու անհատ և քաղաքացի՝ ունակ գնահատելու անհատ - հասարակություն փոխազդեցությունները և փոխակերպումները պատմական տարբեր շրջափուլերում:

***Հիմնական դպրոցի վերջնարդյունքները՝***

- հասկանա պատմական իրադարձությունները, երևույթները, փաստերը, դրանց փոխկապակցվածությունն ու պատճառահետևանքային կապերը , ներկայացնի հայկական քաղաքակրթության ձևավորման և զարգացման ընթացքը, ձեռքբերումները :
- Ցույց տա Հայաստանի և հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգության տեղը և դերը համաշխարհային քաղաքակրթության մեջ:
- Ջարգացնի քննադատական մտածողությունը, հետազոտելու, աղբյուրների հետ աշխատելու, հաղորդակցվելու, վերլուծելու, գնահատելու, հարցադրումներ կատարելու, լսելու, քննարկելու, բանավիճելու, սեփական տեսակետներն ու դիրքորոշումները հիմնավորելու, կշռադատված որոշումներ կայացնելու կարողություններն ու հմտությունները:
- Ծանոթանա մարդկության պատմության ընթացքում տեղ գտած փոփոխություններին:
- Հասկանա դրանց իրականացման գործում մարդու և շրջակա միջավայրի փոխազդեցությունը:
- Ծանոթանա մշակութային բազմազանությանը :
- Հասկանա անհատ, հասարակություն և միջավայրի փոխազդեցություն փոխկապակցվածությունը:
- Գործի որպես պատասխանատու քաղաքացի:

**2. «Ես և իմ հայրենիքը» առարկայի, դասընթացի ընդհանուր բնութագիրը.**

***Ա. Դասընթացի արդիականությունը՝***

«Ես և իմ հայրենիքը» և «Ես, իմ հայրենիքն ու աշխարհը» դասընթացները նպաստում են իր ինքնությունն ու քաղաքակրթությունների արժեհամակարգերը ճանաչող անհատի ձևավորմանը, որն էլ միտված կլինի իր գործունեությամբ նպաստելու հայ և համաշխարհային հասարակության զարգացմանն ու վերափոխմանը՝ այն սկսելով իր անձից և իր սոցիալական ու բնական միջավայրից: Ուսումնասիրելու է աշխարհն ու տարբեր քաղաքակրթություններից ստացած ժառանգությունն ու դրանց ազդեցությունը մեր օրերի վրա:

***Բ. Ծրագրի առանձնահատկությունները՝*** առարկայի ծրագրի առանձնահատկությունները, հիմնական գաղափարը, որի վրա հիմնված են առարկայի (դասընթացի) մոտեցումները, սկզբունքները, ծրագրի փուլերը, դրանց հիմնավորումը և փոխհարաբերությունները.

«Ես և իմ հայրենիքը» և «Ես, իմ հայրենիքն ու աշխարհը» դասընթացների առանձնահատկությունը նրանում է, որ սովորողին դրդում է ակտիվ հասարակական գործունեության՝ ձևավորելով պատասխանատու և գիտակից անձի ձևավորմանը:

***Ծրագիրը կառուցվել է հետևյալ չորս հիմնական հասկացությունների շուրջ.***

1. Անհատ
2. Ինքնություն
3. Հասարակություն
4. Արժեք

***«Ես և իմ հայրենիքը» և «Ես, իմ հայրենիքն ու աշխարհը» դասընթացները ուսումնասիրվում են հետևյալ 16 ենթահասկացությունների միջոցով.***

«Կառավարում», «Զարգացում», «Փոփոխություն», «Համակարգ», «Անհատ», «Պայքար», «Պատճառ-հետևանք», «Հեռանկար», «Քաղաքակրթություն», «Հավատալիք», «Նորարարություն», «Զև», «Ժամանակ, տեղ, տարածություն», «Հարաբերություններ», «Գլոբալ մարտահրավեր», «Համագործակցություն»:

***Գ.Սովորողների հետ աշխատանքի հիմնական մեթոդների և տեխնոլոգիաների, գնահատման առանձնահատկությունների, եղանակների և ձևերի համառոտ նկարագրություն.***

Ուսուցման արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկում ենք կիրառել այնպիսի տեխնոլոգիաներ և մեթոդներ, որոնք կապահովեն յուրաքանչյուր սովորողի ակտիվ ընդգրկվածությունը ուսուցման գործընթացում:

### **Դասավանդման մոտեցումներ.**

«Ես և իմ հայրենիքը» և «Ես, իմ հայրենիքն ու աշխարհը» դասընթացի ուսումնառության հիմքում դրված են հետևյալ մոտեցումները՝

1. հասկացությունների վրա հիմնված ուսումնառություն (հասկացությունը առարկայի հիմքում ընկած մեծ գաղափարներն են, որոնք ժամանակ, տարածություն և մշակութային սահմանափակումներ չունեն),

2. հմտություններ՝

- ✓ սովորողի մոտ ուսումնական հմտությունների զարգացում՝ քննադատական, վերլուծական, հետազոտական, ստեղծագործական մտածողություն,
- ✓ հաղորդակցական-համագործակցային հմտությունների զարգացում,
- ✓ ինքնակազմակերպման հմտություն:

3. ինքնուրույն հետազոտության վրա հիմնված ուսումնառություն,

4. տարբերակված ուսումնառություն,

5. իրական կյանքին առնչվող և խնդրահարույց հարցերի հետազոտման վրա հիմնված ուսումնառություն:

Ստուգումն ու գնահատումը նախատեսվում է իրականացնել տարբեր բնույթի և տիպի առաջադրանքներով: Առարկայի ուսումնառության համար կարևորում ենք.

1. գիտելիքի
2. հետազոտական մոտեցումների
3. հաղորդակցական հմտությունների
4. մտածողության ձևերի գնահատումը:

### **3. Բովանդակության կառուցման հիմնական սկզբունքները.**

Դասընթացի ծրագիրը կազմված է գիտամանկավարժական հիմնարար սկզբունքների՝ նյութի մատչելիության, տարիքային համապատասխանության, գիտամեթոդական բազմազանության պահանջներին համապատասխան:

«Ես և իմ հայրենիքը» և «Ես, իմ հայրենիքն ու աշխարհը» դասընթացների բովանդակությունը համապատասխանում է.

- գիտության, տեխնոլոգիայի և մշակույթի ժամանակակից նվաճումներն օգտագործելով վեր հանել հայ ժողովրդի պատմական անցյալը և դրա դերակատարումը համաշխարհային պատմության մեջ,

- զարգացնել սովորողի մոտ ազգային-պետական արժեքային համակարգը, ձևավորել պետականակիր արժեհամակարգ ունեցող քաղաքացու,
- ձևավորել հարատև ուսումնառող քաղաքացու և անձի, ով կկարողանա անդադար փոփոխվող արդի աշխարհում ինքնահաստատվել,
- սովորողը վեր է հանելու այն խնդիրները, որի հետ առնչվում է առօրյայում և հիմնվելով ձեռք բերված ուսումնական փորձառության վրա՝ գտնել լուծման նորարար եղանակներ,
- դասընթացը կկազմակերպվի մի շարք այլ գիտակարգերի, մասնավորապես, հասարակագիտական առարկաների հետ սերտ համագործակցության շրջանակներում:

**Ես և իմ հայրենիքը  
5-րդ դասարան**

<b>Թեմա 1. (8 ժամ)</b>	
<b>Ես ապրում եմ լեռնային երկրում Քարտեզը իմ գործիքն է՝ ժամանակի և տարածության մեջ</b>	
<b>Նպատակ</b>	Աշակերտը ճանաչում է փոքր ու մեծ հայրենիքը և սովորում ստեղծել հարթության վրա դրանց մոտավոր պատկերը՝ քարտեզը:
<b>Հետազոտության հարցը</b>	Ո՞վ եմ ես, իմ ազգը: Ի՞նչ է քարտեզը, քարտեզների ի՞նչ տեսակներ կան, որո՞նք են տարբեր քարտեզների առանձնահատկությունները, ինչպե՞ս կիրառել դրանք: Ինչպե՞ս է ձևավորվել տոհմաճառը՝ յուրաքանչյուր ընտանիքի ու ազգի պատմությունը: Ինչպե՞ս են քարտեզները մեզ օգնում ընկալել ժամանակը, տեղը և տարածքը: Արդյո՞ք կարելի է միշտ վստահել քարտեզների:
<b>Վերջնարդյունք</b>	

1. Ճանաչի իր բնակության վայրը, պետությունը, հայոց հայրենիքը, նրա աշխարհագրական դիրքը, սահմանները, պատմաաշխարհագրական միջավայրը:
2. Ծանոթանա տարբեր ժամանակների քարտեզների հետ:
3. Կարդա քարտեզներ, բացատրի դրանց դերակատարությունը:
4. Ձևավորի հոգատար վերաբերմունք իր ընտանիքի, ազգի անցյալի նկատմամբ:
5. Կատարի պարզ նախագծային կամ հետազոտական աշխատանք:

**Թեմայի բովանդակություն**

- Ես իմ փոքր հայրենիքում. գյուղի կամ քաղաքային թաղամասի հատակագիծ-քարտեզը:
- Իմ համայնքը, մարզը և երկիրը:
- Տարածաշրջանի ֆիզիկական և քաղաքական լանդշաֆտը, մեր հարևանները:
- Քարտեզների տեսակները և տարբերությունը. ինչի՞ համար են դրանք պետք:
- Ես ճանապարհորդում եմ Հայկական լեռնաշխարհով՝ նահանգներ, մայրաքաղաքներ, բերդեր, ամրոցներ, եկեղեցիներ, լեռներ, լճեր...
- Զինանշաններ և դրոշներ՝ ժամանակակից և պատմական:
- Հետադարձ կապ:

Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող գաղափարներ
--------------------------------	-------------------

<p>Բնակավայրի քարտեզի ստեղծում Դեպքի ուսումնասիրում Սահիկաշարի ստեղծում</p>	<p style="text-align: center;"><b>Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ</b></p> <p>Սովորողները ուսումնասիրում են տարբեր մարդկանց ճանապարհորդությունները, մարդկության պատմության շրջադարձային կետերը, ինչպես նաև անհատների և քաղաքակրթության միջև հարաբերությունները, դրանց փոխկապակցվածությունը տվյալ անձի, ազգի և մարդկության տեսանկյունից:</p>
---	--

**Միջառարկայական կապերը թեմայում**

Մաթեմատիկա-մասշտաբ  
Բնագիտություն- երկրագնդի ռելիեֆի փոփոխություն, աշխարհագրական օբյեկտների (Արաքս, Տիգրիս, Եփրատ և այլն) նկարագրություն  
Գրականություն-տեքստերի ընթերցում՝ Հերոդոտոս, Մարկո Պոլո, Քսենոփոն և այլն:

**Հանրակրթական չափորոշիչ**

Հ14, Հ18, Հ26, Հ27, Հ28

**Թեմա 2. (10 ժամ)**

**Հայերի (իմ) ծագումնաբանությունը.  
Հայկական լեռնաշխարհի կյանքը, կենցաղն ու լեզուները**

**Նպատակ**

Սովորողը ծանոթանում է հայ ժողովրդի ծագումնաբանության վարկածներին՝ ուսումնասիրելով մշակույթն ու կենցաղը, ավանդապատումները, ավանդույթները, ծեսերն ու տոները:

**Հետազոտության հարցը**

Ի՞նչ է մշակույթը:  
Որո՞նք են իմ հոգևոր-մշակութային ակունքները. Հայկ ու Բելից մինչև մեր օրեր՝ Կոմիտաս, Արամ Խաչատրյան, Հ. Ադամյան, Վ. Փափազյան, Մանսուրյան:  
Արդյո՞ք հին մշակույթի պահպանումը կարևոր է հասարակության ինքնության զարգացման համար:

**Վերջնարդյունք**

- Բնութագրի Հայկական լեռնաշխարհի բնակիչների ավանդական զբաղմունքը, առօրյա կյանքն ու կենցաղը:
- Ներկայացնի մշակույթը և կենցաղը, ազգային տարազը, խոհանոցը, կիրառական արվեստը:
- Ճանաչի տեղանքի և պատմական վայրերի ու իրադարձությունների հետ կապված ավանդապատումները:
- Ներկայացնի ավանդույթները, տոներն ու ծեսերը:
- Ճանաչի հոգևոր-մշակութային արժեքները՝ որպես համամարդկային արժեքներ:
- Ծանոթանա ազգային փոքրամասնությունների ավանդական մշակույթին ու կենցաղին:

**Թեմայի բովանդակություն**

- Ավանդական մշակույթ և կենցաղ, ազգային տարազ, խոհանոց, կիրառական արվեստ և

- այլն,
- տեղանքի (սարերի, ջրերի, քաղաքների ու գյուղերի և այլն) աշխարհագրական և պատմական վայրերի ու իրադարձությունների (քաղաքների, ամրոցների, վանքերի, գործիչների, ճակատամարտերի և այլն) հետ կապված պատմական ավանդապատումները,
- ավանդույթներ, ծեսեր, տոներ՝ Սուրբ Խաչ, Սուրբ Գևորգ, Սուրբ Ծնունդ և Մկրտություն, Սուրբ Սարգիս, Տյառնընդառաջ, Բարեկենդան, Ծաղկազարդ, Զատիկ, Համբարձում, Հոգեգալուստ, Վարդավառ ,
- ազգային փոքրամասնությունների ավանդական մշակույթն ու կենցաղը, ավանդույթներն ու տոները
- հետադարձ կապ:

Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող գաղափարներ
<p>Թղթապանակի ստեղծում Դեպքի ուսումնասիրում Սահիկաշարի ստեղծում</p> <p>Հարցազրույց տասիկների, պապիկների հետ</p>	<p><b>Անհատական և մշակութային արտահայտում</b></p> <p>Ո՞րն է ստեղծարարության բնույթը և նպատակը:</p> <p>Սովորողները ուսումնասիրում են այն ուղիները, որոնցով մենք բացահայտում և արտահայտում ենք գաղափարներ, համոզմունքներ, արժեքներ, զգացումներ, բնության երևույթներ, մշակույթի դրսևորումներ, արժևորում ենք գեղագիտությանը և ստեղծարարությունը:</p>

**Միջառարկայական կապերը թեմայում**

Մաթեմատիկա-ամենատարբեր հաշվարկների և խնդիրների ստեղծում  
 Գրականություն-ազգային տոների ու ավանդույթների, կենցաղի նկարագրությունը  
 Արվեստ-տոների բեմադրում, ազգային երգ ու պար

**Հանրակրթական չափորոշիչ**

Հ14, Հ18, Հ26, Հ27, Հ28



**Թեմա 3. (24 ժամ)**

**Իմ հայրենիքի էպոսը՝ «Մասնա ծոեր»**

**Նպատակ**

Աշակերտը «Մասնա ծոեր» էպոսի օրինակով ուսումնասիրի հայ ազգի մշակութային առանձնահատկությունները, որը յուրաքանչյուրին դարձնում է ինքնատիպ: Այն կղիտարկվի որպես հայկական պետության կառուցման և հզորության ապահովման ուղեցույց:

**Հետազոտության հարցը**

Ի՞նչ է էպոսը, ի՞նչ է ազատությունը, հավասարությունը:  
Արդյոք ազատությունն ու անկախությունը կարևոր են պետություն ունենալու համար:

**Վերջնարդյունք**

1. ճանաչի հայ հոգևոր և նյութական մշակութային արժեքները <<Մասունցի Դավիթ>> էպոսում, գնահատի դրանց համամարդկային նշանակությունը, հարգալից ու հոգատար վերաբերմունք ունենա այդ արժեքների նկատմամբ:
2. «Մասնա ծոեր» էպոսի հիման վրա պատկերացնի հայկական հասարակության իդեալական պատկերը՝ ազատության, արդարության և խաղաղ ստեղծարար աշխատանքի վրա հիմնված:
3. Գնահատի խաղաղասիրությունը, արդարությունը, փոխադարձ հարգանքը և ընկերասիրությունը:
4. «Մասնա ծոեր» էպոսի հիման վրա նկարագրել կանանց և տղամարդկանց փոխադարձ հարգանքի և համագործակցության անհրաժեշտությունը, հասարակության մեջ ունեցած տարբեր, սակայն հավասարաչափ կարևոր դերակատարումը:
5. Գիտակցել սեփական հայրենիքի ազատության և հասարակական արդարության համար պայքարելու անհրաժեշտությունը:

**Թեմայի բովանդակություն**

- Մանասարը և Բաղդասարը կառուցում են Մասունը՝ ազատության և արդարության վրա հիմնված հասարակության ստեղծում, իշխանավորը ծառայում է հասարակ մարդուն: Հասարակության երեք ոլորտներ՝ եկեղեցի (հոգևոր արժեքներ), իշխանություն (իրավունք և անվտանգություն) և գյուղացին ու արհեստավորը (տնտեսական բարիքների ստեղծում):
- Մանասարի և Բաղդասարի ու մոր, կանանց կերպարները՝ Ծովինարը , Դեղձուն Ծամր ու նրա քույրը, նրանց բնավորությունը և դերը:

- Մեծ Միերը, նրա սխրանքները և սխալը՝ Արմադանին դավաճանելը: Ընտանեկան հավատարմության, փոխադարձ սիրո, վստահության, հարգանքի և հավասարության կարևորումը: Տաճարի կառուցումը:
- Դավիթը՝ մարդկային անկեղծության, պարզության, ազնվության, մանկական միամտության ուժը մարմնավորող հերոս, հովիվ, շինարար և ռազմիկ: Ձենով Օհան, Վերգո, Քեռի Թորոս: Ազատությունը արժեք է, որի համար պետք է պայքարել: Դավթի սխալը. Չմշկիկ Սուլթան և Գոհար: Գոհարի դերը: Դավթի և Միերի մենամարտը: Դավթի մահը:
- Փոքր Միերը՝ մեծագույն հերոս, հաղթական ասպետ, որի սիրտը բարի է և մաքուր: Միերի հեռանալը և ուղերձը՝ աշխարհի բարի դառնալու մասին:
- Հետադարձ կապ:

Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող գաղափարներ
--------------------------------	-------------------

<p>Դեպքի ուսումնասիրում Աղբյուրի ուսումնասիրում Զեկույց</p>	<p><b>Անհատներ և հարաբերություններ</b></p> <p>Ո՞վ եմ ես: Ո՞վ ենք մենք: Սովորողները ուսումնասիրում են անհատների կյանքը, համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերությունները, ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը:</p>
---	--

**Միջառարկայական կապերը թեմայում**

Գրականություն-առասպել, էպոս  
Բնագիտություն- կլիմայի կամ լանդշաֆտի փոփոխություն  
Մաթեմատիկա-օրացույց լուսնային, արևային, շաբաթների բաժանում և այլն  
Լեզու-հետաքրքիր պատմություններ քաղաքակրթությունների մասին՝ գիր,

**Հանրակրթական չափորոշիչ**

Հ14, Հ16, Հ26, Հ27, Հ28

<b>Թեմա 4 (10 ժամ)</b>
<b>Սասունցի Դավթի և այլ ժողովուրդների էպիկական պատումների հերոսները</b>
<b>Նպատակ</b>
Աշակերտը ուսումնասիրի հայ ազգի մշակութային առանձնահատկությունները, որը յուրաքանչյուրին դարձնում է ինքնատիպ և համեմատի դրանք այլ ժողովուրդների մշակութային ժառանգության հետ՝ էպոսների, լեգենդների և ժողովրդական արվեստի որոշ նմուշների օրինակով:
<b>Հետազոտության հարցը</b>
Ո՞րն է հայկական քաղաքակրթության մշակութային կարևոր ներդրումը: Որո՞նք են տարբեր էթնոսների էպիկական պատումները: Ի՞նչպես մենք կարող ենք ծանոթանալ անցյալի հետ, ի՞նչ գործոններ նպաստեցին տարբեր քաղաքակրթությունների կամ մշակույթների ի հայտ գալուն և զարգանալուն: Կարող ենք, արդյո՞ք, ամեն ինչ իմանալ անցյալի մասին:
<b>Վերջնարդյունք</b>
<ol style="list-style-type: none"> <li>1. ճանաչի որոշ պատմական և մշակութային գործիչներին ու նրանց գործունեությունը:</li> <li>2. Համեմատի հայ ժողովրդի էպոսը այլ ժողովուրդների մշակութային ժառանգության հետ:</li> <li>3. Ճանաչի հայ և համաշխարհային հոգևոր և նյութական մշակութային արժեքները (էպոս, գրի տեսակներ, և այլն), գնահատի դրանց համամարդկային նշանակությունը, հարգալից ու հոգատար վերաբերմունք ունենա այդ արժեքների նկատմամբ:</li> <li>4. Զարգացնի վերլուծական մտածողությունը համեմատությունների և քննարկումների միջոցով:</li> </ol>
<b>Թեմայի բովանդակություն</b>
<ul style="list-style-type: none"> <li>● Իռլանդացի Կու Խուլաինը՝ ժողովրդի միայնակ պաշտպանը և Սասունի հերոսները. Կու Խուլաինը և Հայաստանը, իռլանդական և հայկական խաչերը:</li> <li>● Զիգֆրիդի սխրանքները, Հռենոսի ոսկին. Զիգֆրիդ և Դավիթ:</li> <li>● Կալևալայի հերոսները՝ հողագործ Վեյնեմեյնենը, որսորդ Լեմինկայնենը և դարբին Իլմարինենը:</li> <li>● Ռուսական բիլինաների հերոսները. Սվյատոգորը և Արարատ լեռ.: Իլյա Մուրոմեց,</li> </ul>

<p>Դոբրինյա Նիկիտիչ և Ալյոշա Պոպովիչ:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Արթուր թագավորի, Կլոր Սեղանի ասպետների և Պերսևալի (Պարսիֆալի) մասին լեգենդները:</li> <li>• Արևելքի ժողովուրդների էպիկական պատումները:</li> <li>• Հետադարձ կապ</li> </ul>	
Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող գաղափարներ
<p>Թղթապանակի ստեղծում Սեփական լեգենդի կամ առասպելի ստեղծում Բանավեճ</p>	<p><b>Անհատներ և հարաբերություններ</b></p> <p>Ո՞վ եմ ես: Ո՞վ ենք մենք: Սովորողները ուսումնասիրում են անհատների կյանքը, համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերությունները՝ ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը:</p> <p><b>Անհատական և մշակութային արտահայտում</b></p> <p>Ո՞րն է ստեղծարարության բնույթը և նպատակը: Սովորողները ուսումնասիրում են այն ուղիները, որոնցով մենք բացահայտում և արտահայտում ենք գաղափարներ, համոզմունքներ, արժեքներ, զգացումներ, բնության երևույթներ, մշակույթի դրսևորումներ, արժևորում ենք գեղագիտությունը և ստեղծարարությունը:</p>
<p><b>Միջառարկայական կապերը թեմայում</b></p>	

Լեզու և գրականություն-էպոսի և վիպերգերի գեղարվեստական արժեքը  
Արվեստ-էպոսի և վիպերգի արտացոլանքը արվեստում. նկարի, երգի ու բեմադրի  
Մաթեմատիկա-ամենատարբեր հաշվարկներ, որ կատարել են հերոսները իրենց  
գործողություններում, խնդիրների ստեղծում:

**Հանրակրթական չափորոշիչ**

Հ14, Հ16, Հ26, Հ27, Հ28

**Թեմա 5. (12 ժամ)**

**Մշակույթի կրոնական հիմքը. միջնադարյան լեզենդներ ու ավանդապատումներ:  
Քրիստոնեական արժեհամակարգ:**

**Նպատակ**

Աշակերտը ուսումնասիրի միջնադարյան լեզենդները, ավանդապատումները և քրիստոնեական արժեհամակարգը, որոնք ձևավորվել են տարբեր ժամանակներում և վայրերում՝ հանգեցնելով այնպիսի փոփոխության և նորարարության, որը ուսումնասիրում ենք մինչև հիմա:

**Հետազոտության հարցը**

Ի՞նչ է քրիստոնեական արժեհամակարգը, ի՞նչ է խորհրդանիշը, ինչպե՞ս են դրանք ձևավորվում:

Արդյո՞ք կրոնական բազմազանությունն է տարբերակում ազգերին:

**Վերջնարդյունք**

1. Գնահատի խաղաղասիրությունը, արդարությունը, փոխադարձ հարգանքը և ընկերասիրությունը:
2. Ճանաչի պատմական և մշակութային գործիչներին ու նրանց գործունեությունը:
3. Կիրառի էթիկական և վարքային կանոնները, ձևավորի հոգատար և պատասխանատու վերաբերմունք իր ու շրջապատի նկատմամբ:
4. Գնահատի թույլին օգնելու, անպաշտպանին պաշտպանելու, փոխադարձ հարգանքի, սիրո, համերաշխության, ազատության, հավասարության և եղբայրության վրա հիմնված մարդկային հարաբերությունները:
5. Գնահատի քրիստոնեական արժեհամակարգի դրսևորումները տարբեր

<p>հասարակություններում և պատմական ժամանակաշրջաններում:</p> <p>6. Ուսումնասիրի նախաքրիստոնեական և քրիստոնեական արժեհամակարգերի հարաբերակցությունը հայ իրականության մեջ:</p> <p>7. Չարգացնի վերլուծական մտածողությունը համեմատությունների և քննարկումների միջոցով:</p>	
<p><b>Թեմայի բովանդակություն</b></p>	
<p>1. Քրիստոնեություն՝ մարդկային եղբայրության և սիրո վրա հիմնված հասարակության իդեալ:</p> <p>2. Առաքյալները՝ Թադևոս և Բարդուղիմեոս և նրանց կատարած գործերը:</p> <p>3. Քրիստոնեության ընդունումը, Գրիգոր Լուսավորիչ, Հռիփսիմե, Գայանե կույսեր:</p> <p>4. Սուրբ զինվորներ՝ Սուրբ Սարգիս, Սուրբ Գևորգ, Վարդան Մամիկոնյան և այլն:</p> <p>5. Մեսրոպ Մաշտոց և Գրիգոր Նարեկացի:</p> <p>6. Հետադարձ կապ:</p>	
<p><b>Առաջարկվող գործունեության ձևեր</b></p>	<p><b>Խաչվող գաղափարներ</b></p>
<p>Աղբյուրների ուսումնասիրություն Դերային և համագործակցային վարժություններ Իրավիճակների խաղարկում և քննարկում Բանավեճ</p>	<p><b>Անհատական և մշակութային արտահայտում</b></p> <p>Ո՞րն է ստեղծարարության բնույթը և նպատակը: Սովորողները ուսումնասիրում են այն ուղիները, որոնցով մենք բացահայտում և արտահայտում ենք գաղափարներ, համոզմունքներ, արժեքներ, զգացումներ, բնության երևույթներ, մշակույթի դրսևորումներ, արժևորում ենք գեղագիտությունը և ստեղծարարությունը:</p> <p><b>Արդարություն և զարգացում</b> Ի՞նչ են հետընթացն ու զարգացումը: Սովորողները ուսումնասիրում են մարդու իրավունքները և պարտականությունները, մարդ-համայնք-հասարակություն հարաբերությունները, ռեսուրսների տեղաբախշումը, հավասար հնարավորությունները,</p>

	հակամարտության և խաղաղության քանաձևերը:
<b>Միջառարկայական կապերը թեմայում</b>	
Գրականություն-ստեղծագործությունների գրական արժեքի գնահատում Մաթեմատիկա-հաշվարկներ, խնդիրների ստեղծում	
<b>Հանրակրթական չափորոշիչ</b>	
Հ14, Հ18, Հ26, Հ27, Հ28	

**Ես, իմ հայրենիքն ու աշխարհը  
6-րդ դասարան**

<b>Թեմա 1. Նախապատմությունից դեպի պատմություն</b>
<b>Նպատակ</b>
Աշակերտը պատկերացում կազմի բնական մարդու առաջացման վարկածների և հաղթարշավի, մարդկության պատմության առաջին նեոլիթյան, հեղափոխության մասին:
<b>Հետազոտության հարցը</b>
<ul style="list-style-type: none"> <li>● Ինչպե՞ս է փոխվել մարդու կյանքը նախապատմությունից մինչև առաջին քաղաքակրթության ձևավորումը:</li> <li>● Որքանո՞վ նեոլիթյան հեղափոխությունը ազդեց մարդու զարգացման վրա:</li> <li>● Արդյո՞ք նեոլիթյան հեղափոխությունը համաշխարհայինացման առաջին փորձն էր:</li> </ul>
<b>Վերջնարդյունք</b>
1. Ներկայացնի նախնադարյան մարդու ապրելակերպը, կենցաղը և մշակույթը՝ քարանձավային նկարչության, ժայռապատկերների և ծիսական քանդակների օրինակներով:

2. Ներկայացնի «նեոլիթյան հեղափոխության» բովանդակությունը, վերլուծի դրա պատճառներն ու հետևանքները:
3. Գնահատի նեոլիթյան հեղափոխության պատմական նշանակությունը քաղաքակրթությունների ձևավորման գործում:
4. Ճանաչի Հայկական լեռնաշխարհը նախապատմական ժամանակաշրջանում՝ ըստ մարդաբանական գտածոների և հնագիտական հուշարձանների:
5. Առաջարկի վարկածներ Պորտասարի հուշարձանի՝ որպես գյուղատնտեսության մասին վկայող հնագույն հուշարձանի առաջացման և կործանման վերաբերյալ:

**Թեմայի բովանդակություն**

Հոմո հաբիլիսի քարանձավներում ճանապարհորդում ենք Լյուսիի (homo sapiens) հետ:

- Մարդու ծագումը տարբեր աշխարհընկալումներում. ավանդույթները, էվոլյուցիոն տեսությունը (homo habilis՝ հմուտ մարդ, homo erectus՝ ուղիղ քայլող մարդ, homo sapiens՝ բանական մարդ) ժամանակակից մարդու տարածումը երկրի տարբեր շրջաններում (միգրացիա):
- Մարդկային հանրույթը քարե դարում (պալեոլիթից նեոլիթյան հեղափոխություն)՝ համակեցական, տեխնոլոգիական, տնտեսական, մշակութային-կրոնական, հաղորդակցական բնութագիչները:
- Նեոլիթյան հեղափոխությունը քաղաքակրթության ձևավորման հիմք. առաջին քաղաքակրթությունների ձևավորումը և դրանց բնութագրիչները:
- Հասարակության անհամաչափ զարգացման օրինաչափությունները:
- Նախապատմությունը Հայկական լեռնաշխարհում. Հայկական լեռնաշխարհի հնագույն մարդաբանական գտածոները և հնագիտական հուշարձանները:
- Հետադարձ կապ:

Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող գաղափարներ
--------------------------------	-------------------

<p>Այցելություն պեղավայրեր Պաստառ Ժամանակի մեքենա՝ &lt;&lt; Ես ապրում եմ նախնադարում &gt;&gt; շարադրանք</p>	<p><b>Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայունություն</b> Ի՞նչ է փոխկապակցվածությունը: Սովորողները ուսումնասիրում են մարդու ստեղծած համակարգերի և համայնքների փոխկապակցվածությունը, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, հնարավորությունները, որոշումների ազդեցությունը մարդկության և շրջակա միջավայրի վրա:</p>
---	--



<b>Միջառարկայական կապերը թեմայում</b>	
Արվեստ-նախնադարյան մարդու կերպարի արտացոլանքը արվեստում, ժայռապատկեր և այլն Գրականություն-գրական ստեղծագործություններ Մաթեմատիկա-զանազան հաշվարկներ, ինդիքների ստեղծում	
<b>Հանրակրթական չափորոշիչ</b>	
Հ14, Հ18, Հ26, Հ27, Հ28	

<b>Թեմա 2 Ի՞նչ կարող ենք սովորել հնագույն քաղաքակրթություններից</b>	
<b>Նպատակ</b>	
Սովորողը ուսումնասիրի հնագույն քաղաքակրթությունները և դրանց ազդեցությունը ժամանակակից աշխարհի վրա:	
<b>Հետազոտության հարցը</b>	
Որո՞նք են հնագույն քաղաքակրթությունների նվաճումները: Ինչպե՞ս կարող ենք մենք ուսումնասիրել անցյալը, ի՞նչ է քաղաքակրթությունը: Ո՞ր գործոնները նպաստեցին տարբեր քաղաքակրթությունների զարգացմանը: Կարող ենք պատկերացնել մեր կյանքը առանց հնագույն քաղաքակրթությունների ներդրման:	
<b>Վերջնարդյունք</b>	
<ol style="list-style-type: none"> <li>1. Ներկայացնի աշխարհի և Հայկական լեռնաշխարհի հնագույն քաղաքակրթությունները, դրանց ձևավորման ու զարգացման ընթացքը, համեմատի միմյանց հետ, գնահատի դրանց ազդեցությունը մեր օրերի վրա:</li> <li>2. Ճանաչի հայոց և համաշխարհային պատմության ակնառու գործիչներին և գնահատի նրանց գործունեությունը, ձևավորի պատասխանատու վերաբերմունք իր ու շրջապատի նկատմամբ:</li> <li>3. Նկարագրի մշակույթի հիմնական ուղղությունները, բաղադրիչները, ձեռքբերումները, հայտնի կարծիք հայապահպանության մեջ դրանց դերակատարման վերաբերյալ:</li> <li>4. Ձևակերպի համակեցության նորմեր և կանոններ՝ իր և իր դասարանցիների համար, ցույց</li> </ol>	

տա դրանց անհրաժեշտությունը դպրոցում, տանը և համայնքում:

**Թեմայի բովանդակություն**

- Հին Եգիպտոս. պետության գաղափարը, ճարտարապետություն, արվեստ, բժշկություն, երկրաչափություն, հիերոգլիֆներ, դիցաբանություն, լեգենդ Օսիրիսի և Իսիսի մասին:
- Արիական և սեմական քաղաքակրթությունների առանձնահատկություններն ու փոխհարաբերությունները:
- Միջագետք. առաջին օրենքներ, քաղաքների առաջացումը, մշակույթ, գիր, աստղագիտություն և օրացույց, աշխարհագրություն, Գիլգամեշ:
- Հին Արևելք՝ Ասորեստան, Բաբելոն՝ աշխարհակալ տերություն, այբուբեն Ասորեստանի բանակը:
- Հին Հնդկաստան. քաղաքաշինության զարգացումը՝ Մոհենջո Դարո կաստաների համակարգը, հատվածներ Մահաբհարաթա և Ռամայանա պոեմներից, բուդդիզմ:
- Հին Չինաստան. Չինական պատ, Մետաքսի ճանապարհը, դաոսիզմ:
- Հին Միջերկրյա ծովը և Փոքր Ասիա. ծովային առևտուր, արքայական ճանապարհ:
- Վաղ պետական կազմավորումները Հայկական լեռնաշխարհում (Ք.ա. III հազարամյակից մինչև Ք.ա. I հազարամյակ):
- Հայկական լեռնաշխարհի վաղ պետական կազմավորումները (Արատտա, Արմանում, Հայասա, Նաիրի):
- Հնագույն քաղաքակրթությունների հասարակական կյանքը, մարդկանց, զբաղմունքը, առօրյա կյանքն ու կենցաղը, Վահագնի ծնունդը այդ ժամանակներից մեզ հասած հեռավոր արձագանք:
- Հնագույն հնդկական և իրանա-հայկական դիցաբանությունների և կրոնափիլիսոփայական համակարգերի համեմատություն:
- Իրան-Թուրան՝ մշակույթ և բնություն (Կուլտուրա և Նատուրա):
- Հետադարձ կապ:

**Առաջարկվող գործունեության ձևեր**

**Խաչվող գաղափարներ**

Ստեղծել թղթապանակ կամ ամսագիր՝ <<Հնագույն քաղաքակրթությունները իմ աչքերով>>  
 Արտանկարել հիերոգլիֆներ և սեպագրեր  
 Արտանկարել և քանդակել հին եգիպտական և բաբելական արվեստի նմուշներ, դիցարանի կերպարներ  
 Կատարել աստղային երկնքի դիտումներ,

**Կողմնորոշում** **Ժամանակի** **և**  
**տարածության մեջ**  
 Որտե՞ղ և Ե՞րբ  
 Սովորողները ուսումնասիրում են տարբեր մարդկանց կենցաղը, նրանց պատմությունները, ճանապարհորդությունները, մարդկության պատմության շրջադարձային կետերը,

<p>գտնել ձմեռային երկնքում Օրիոնի համաստեղությունը և Մեծ շան ալֆա աստղը՝ Միրիուսը</p> <p>Նկարել հնդկական դիցարանի կերպարներ</p> <p>Ծանոթանալ չինական թեյի, մետաքսի և ձենապակու մշակույթին, նկարչությանը, պոեզիայի նմուշներին, բժշկությանն և մարտարվեստների օրենքներին</p>	<p>հայտնագործությունները, գյուտերը, ինչպես նաև անհատների և քաղաքակրթությունների միջև հարաբերությունները, դրանց փոխկապակցվածությունը տվյալ անձի, ազգի և մարդկության տեսանկյունից:</p> <p><b>Անհատական և մշակութային արտահայտում</b></p> <p>Ո՞րն է ստեղծարարության բնույթը և նպատակը:</p> <p>Սովորողները ուսումնասիրում են այն ուղիները, որոնցով մենք բացահայտում և արտահայտում ենք գաղափարներ, համոզմունքներ, արժեքներ, զգացումներ, բնության երևույթներ, մշակութային դրսևորումներ, արժևորում ենք գեղագիտությունը և ստեղծարարությունը:</p>
<p><b>Միջառարկայական կապերը թեմայում</b></p>	
<p>Գրականություն-գրական ստեղծագործություններ, Մաթեմատիկա-հաշվարկներ, խնդիրների ստեղծում Արվեստ-հին աշխարհի քաղաքակրթությունների ընդհանրությունները արվեստում Օտար լեզու-տեքստերի ընթերցում</p>	
<p><b>Հանրակրթական չափորոշիչ</b></p>	
<p>Հ14, Հ16, Հ26, Հ27, Հ28</p>	

<p><b>Թեմա 3 Արարատյան (Վանի) համահայկական թագավորությունը</b></p>
<p><b>Նպատակ</b></p>
<p>Սովորողը ուսումնասիրի Արարատյան թագավորության պատմությունը, առանձնահատկությունները, թագավորության վերելքն ու անկումը, մշակութային ժառանգությունը:</p>

<b>Հետազոտության հարցը</b>	
<ul style="list-style-type: none"> <li>• Ո՞րն է Վանի թագավորության ներդրումը համաշխարհային քաղաքակրթության մեջ:</li> <li>• Ո՞րն էր Վանի թագավորության ներդրումը հայկական պետության զարգացման գործում:</li> </ul>	
<b>Վերջնարդյունք</b>	
<ol style="list-style-type: none"> <li>1. Նկարագրի Վանի թագավորության ձևավորումը՝ ներկայացնելով, բացատրելով, վերլուծելով ներքին և արտաքին պատճառները, արքաների գործունեությունը:</li> <li>2. Մեկնաբանի Վանի թագավորության անցումը տերություն:</li> <li>3. Բացատրի Վանի թագավորության քաղաքակրթական կառույցը:</li> <li>4. Գնահատի Վանի թագավորության քաղաքակրթական ժառանգությունը:</li> </ol>	
<b>Թեմայի բովանդակություն</b>	
<ul style="list-style-type: none"> <li>• Արարատյան (Վանի) թագավորության ձևավորման աշխարհագրական միջավայրը, ներքին և արտաքին նախադրյալները:</li> <li>• Վանի թագավորության հիմնադրման և կայացման գործընթացը: Վանի թագավորության արքաների բարեփոխումները. բանակ, միասնական դիցարան:</li> <li>• Վանի թագավորության վերածումը աշխարհակալ տերության. ներքին և արտաքին մարտահրավերները:</li> <li>• Վանի թագավորության թուլացման պատճառները, անկումը:</li> <li>• Արարատյան (Վանի) թագավորության պետական կարգը, բանակը, տնտեսությունը, առօրյա կյանքն ու կենցաղը, համակեցության հարաբերությունները:</li> <li>• Վանի թագավորության քաղաքակրթական ժառանգությունը:</li> <li>• Հետադարձ կապ:</li> </ul>	
<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Խաչվող գաղափարներ</b>
<p>Վերլուծական էսսե</p> <p>Աղբյուրի հետ աշխատանք</p> <p>Արձանագրություն կարդալն ու նկարելը</p>	<p><b>Անհատներ և հարաբերություններ</b></p> <p>Ո՞վ եմ ես: Ո՞վ ենք մենք:</p> <p>Սովորողները ուսումնասիրում են անհատների կյանքը, համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային</p>

	<p>փոխհարաբերությունները՝ ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը:</p> <p><b>Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայունություն</b>  Ի՞նչ է փոխկապակցվածությունը:  Սովորողները ուսումնաիրում են մարդու ստեղծած համակարգերի և համայնքների փոխկապակցվածությունը, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, հնարավորությունները, որոշումների ազդեցությունը մարդկության և շրջակա միջավայրի վրա:</p>
--	--

<b>Միջառարկայական կապերը թեմայում</b>	
<p>Լեզուներ և գրականություն-տեքստերի ընթերցում, վերլուծություն  Մաթեմատիկա-հաշվարկներ, խնդիրների ստեղծում  Արվեստ-դրամ, նկար, ճարտարապետություն</p>	
<b>Հանրակրթական չափորոշիչ</b>	
Հ14, Հ18, Հ26, Հ27, Հ28	

<b>Թեմա 4. Համաշխարհային հավատալիքները</b>	
<b>Նպատակ</b>	
<p>Աշակերտը ըմբռնի կրոնի առաջացման անխուսափելիությունը և նրա դերն ու դրսևորման ձևերը մարդկության պատմության տարբեր շրջափուլերում:</p>	

<p>Հավատալիքների համակարգը ուղեցույց է հանդիսանում մարդկանց համար և կարող է ձևավորել անհատականություններ և մշակույթներ:</p>	
<p><b>Հետազոտության հարցը</b></p>	
<p>Որո՞նք են աշխարհի կրոնական հավատալիքները: Ի՞նչ է կրոնը և հավատալիքը:          Որո՞նք են ազգային փոքրամասնությունների հավատալիքները:          Ինչպե՞ս է ժամանակի ընթացքում փոխվել հավատալիքների համակարգը:          Արդյո՞ք մարդը առանց կրոնի կարող է ապրել:</p>	
<p><b>Վերջնարդյունք</b></p>	
<ol style="list-style-type: none"> <li>1. Ուսումնասիրի աշխարհի կրոնական համակարգերը:</li> <li>2. Հետազոտի աշխարհի ստեղծման կրոնական տարբերակը:</li> <li>3. Գնահատի կրոնի և հավատալիքի դերը մարդու կյանքում:</li> </ol>	
<p><b>Թեմայի բովանդակություն</b></p>	
<ul style="list-style-type: none"> <li>• Հավատալիքները նախնադարում. մարդու և բնության սերտ կապը</li> <li>• Հին աշխարհի հավատալիքներ (դիցարան՝ հինարևելյան, անտիկ, հայկական)</li> <li>• Հայկ և Բել, Արա Գեղեցիկ և Շամիրամ, Վահագնի ծնունդը և մյուս առասպելները</li> <li>• Համաշխարհային կրոնները և հավատալիքները</li> <li>• Հետադարձ կապ</li> </ul>	
<p><b>Առաջարկվող գործունեության ձևեր</b></p>	<p><b>Խաչվող գաղափարներ</b></p>
<p>Տեսանյութի ստեղծում. &lt;&lt;Ինչպե՞ս է հավատը ազդում հասարակության և մարդու կենսակերպի վրա&gt;&gt;:</p>	<p><b>Անհատական և մշակութային արտահայտում</b></p> <p>Ո՞րն է ստեղծարարության բնույթը և նպատակը:          Սովորողները ուսումնասիրում են այն ուղիները, որոնցով մենք բացահայտում և արտահայտում ենք գաղափարներ, համոզմունքներ, արժեքներ, զգացումներ, բնության երևույթներ, մշակույթի դրսևորումներ: Արժևորում ենք գեղագիտությունը և ստեղծարարությունը:</p>

<b>Միջառարկայական կապերը թեմայում</b>
Լեզուներ և գրականություն-տեքստերի ընթերցում և մեկնաբանում Արվեստ-կրոնի արտացոլանքը արվեստում Մաթեմատիկա-հաշվարկներ, խնդիրների լուծում
<b>Հանրակրթական չափորոշիչ</b>
Հ14, Հ18, Հ26, Հ27, Հ28

<b>Թեմա 5. Նորամուծություններն ու գաղափարները փոխում են աշխարհը</b>
<b>Նպատակ</b>
Մովորողը ուսումնասիրում է նորամուծություններն ու գաղափարները, որոնց զարգացումը կարող են հանգեցնել հասարակության փոփոխության:
<b>Հետազոտության հարցը</b>
Ի՞նչ է նորամուծությունը և գաղափարը: Ո՞րն է աստվածակենտրոն և մարդակենտրոն քաղաքակրթությունների տարբերությունը: Արդյո՞ք նորամուծությունները ազդում են բոլորի վրա:
<b>Վերջնարդյունք</b>
1. Հետազոտի նորամուծությունների դերն ու ազդեցությունը անհատի և հասարակության վրա: 2. Մեկնաբանի նորարարության միջոցով հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխությունները: 3. Վերլուծի, համադրի և հակադրի պատմական ու հասարակական որոշ երևույթներ, փաստեր և իրադարձություններ՝ զարգացնելով մտածական կարողությունները: 4. Մեկնաբանի քաղաքակրթությունների մշակութային տարբերությունը:
<b>Թեմայի բովանդակություն</b>
<ul style="list-style-type: none"> <li>• Նորամուծությունների հետևանքով ստեղծվում են նոր հնարավորություններ և նոր վտանգներ:</li> <li>• Աշխարհի 7 հրաշալիքներ՝ 7 նորամուծություններ:</li> </ul>

- Գիրը՝ որպես նորամուծություն. գիր-գրատպություն-համակարգիչ-համացանց:
- Եզիպտական Աստվածակենտրոն քաղաքակրթությունից մինչև Հունաստանի մարդակենտրոն քաղաքակրթություն, Եվրոպայի առևանգումը, Էդիպը և Մֆինքսը:
- Եվրոպայի և Ասիայի քաղաքակրթական բախումը, Տրոյական պատերազմը, հույն-պարսկական պատերազմներ:
- Անտիկ աշխարհ: Աստվածներ-հերոսներ-մարդիկ: Աթենք և Մպարտա. պոլիսի և քաղաքացու գաղափարը, իրավական ակտեր՝ օրենսդիր, գործադիր դատական: Մարդու իրավունքներ և այլ, հույն բնափիլիսոփաների հայացքները՝ Պյութագորաս պյութագորական համայնքը իդեալական հասարակություն ստեղծելու փորձ: Մոկրատ-Պլատոն-Արիստոտել-Ալեքսանդր. Ալեքսանդրի արշավանքը՝ Դիոնիսոսի ճանապարհորդության հետքերով, հելլենիզմի առաջացումը:
- Հունական արվեստ և գրականություն:
- Հելլենիստական Հայաստան՝ տարածքներ, քաղաքներ, արքաներ:
- Հետադարձ կապ:

Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող գաղափարներ
<p>Պաստառ. &lt;&lt;Նորամուծությունները փոխում են աշխարհը&gt;&gt;</p> <p>Բանավեճ՝ "Ժամանակակից աշխարհի տեխնոլոգիական նորամուծությունները, առավելություններ և վտանգներ"</p> <p>Պլատոնի՝ Ատլանտիդայի մասին լեգենդի ուսումնասիրություն և ժամանակակից աշխարհի էկոլոգիական աղետների պատճառների քննարկում</p> <p>Հունական արվեստի հետ ծանոթացում, որոշ նմուշների՝ զարդերի, սափորների վրա նկարների, քանդակների արտապատկերում</p> <p>Հին հունական ողբերգություններից որևէ մեկի կրճատ տարբերակի բեմադրում</p> <p>Սոփեստական բանավեճ որևէ խնդրի շուրջ՝ կողմերի դերերի փոփոխությամբ</p>	<p><b>Գիտատեխնիկական նորարարություն</b></p> <p>Ինչպե՞ս ենք գնահատում այն աշխարհը, որտեղ ապրում ենք:</p> <p>Մովորողները ուսումնասիրում են բնությունը, դրանց օրենքները, փոխազդեցությունը մարդկանց և բնության միջև, գիտական և տեխնոլոգիական նվաճումների ազդեցությունը համայնքի և շրջակա միջավայրերի վրա, շրջակա միջավայրի ազդեցությունը մարդկային գործունեության վրա, շրջակա միջավայրի հարմարեցումը մարդու կարիքներին:</p>



**Միջառարկայական կապերը թեմայում**

Արվեստ-արվեստի տեսակները, նորամուծությունների ազդեցությունը ու պատկերումը արվեստում

Լեզուներ և գրականություն-տեքստերի ընթերցում, վերլուծություն

Մաթեմատիկա-հաշվարկներ, խնդիրների լուծում

**Հանրակրթական չափորոշիչ**

Հ10, Հ14, Հ19, Հ23, Հ24, Հ26, Հ27, Հ28